ՀԽՍՀ ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԾՐԱԳԻՐ

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

371
Ծ-98

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՅԵՐԵՎԱՆ 1940

15 MAY 2013

45.548

1 MAR 2010

371
Ծ-98

Ա.

Թարգ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Թարգ. խմբագիր՝ Մ. ՓԻՐՈՒՄՅԱՆ
Տեխ. խմբ. Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Գլավլիտի լիազոր՝ Փ. 1101 Պատվեր 47, տիրաժ 3000
Հանձնված է արտադրության 12 հունվարի 1940 թ.
Ստորագրված է տպագրության 1 փետրվարի 1940 թ.

Պետհր. Մանկավարժական տպարան, Մարքսի փ. № 17 Երևան 1940

2564
40

Հաստատված է ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհին կից բարձրագույն դպրոցների Համամիութենական Կոմիտեյի կողմից «9»-ն օգոստոսի 1938 թ.

# ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

*ՆԱԽԱԳԻԾ*

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

I *մաս. Մանկավարժության ընդհանուր հիմունքները* 6—ժամ

II *մաս. Երեխաների դաստիարակությունը մինչև դպրոց գնալը* . . . . . . . . . . . . . 4—ժամ

III *մաս. Դպրոցական տարիքի երեխաները* . . . 4—ժամ

VI *մաս. ԽՍՀՄ-ի պետական քաղաքականությունը ժողովրդական կրթության բնագավառում դպրոցը* 4—ժամ

V *մաս. Կրթության և ուսուցման տեսություն (դիդակտիկա)* . . . . . . . . . . . . . 30—ժամ

VI *մաս. Դաստիարակության տեսություն* . . . . . 12—ժամ

VII *մաս. Կոմյերիտական և պիոներական կազմակերպությունները դպրոցում. աշակերտական կազմակերպությունները* . . . . . . . . . 4—ժամ

VIII *մաս. Դպրոցն ու ընտանիքը* . . . . . . . . . 4—ժամ

IX *մաս. Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքները աշակերտության հետ* . . . 4—ժամ

X *մաս. Խորհրդային դպրոցի ուսուցիչը* . . . . . 4—ժամ

XI *մաս: Դպրոցավարություն* . . . . . . . . . . . 4—ժամ

*Ընդամենը* 80 *ժամ*

# ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝


1. Մանկավարժության առարկան։
2. Մանկավարժության փիլիսոփայական հիմունքները։
3. Կոմունիստական դաստիարակության նպատակը։
4. Մանկավարժության աղբյուրները։
5. Գիտական մանկավարժական ուսումնասիրության մեթոդները։
6. Մանկավարժությունը և այլ մանկավարժական գիտությունները։


### 1. Մանկավարժության առարկան

Գիտության մարքսիստական սահմանումը։ Խորհրդային մանկավարժությունը գիտություն է աճող սերնդի կոմունիստական դաստիարակության, կրթության և ուսուցման մասին։ Դաստիարակության պատմական և դասակարգային բնույթը։ Դաստիարակություն, կրթություն և ուսուցում հասկացությունների բովանդակությունը։ Մանկավարժության կուսակցականությունը։ Խորհրդային մանկավարժության հիմնական բովանդակությունը։

Հակամարքսիստական փորձեր ռևիզացիայի ենթարկելու մանկավարժությունը որպես գիտություն. մանկաբանության կեղծ գիտությունը, գռեհիկ «ռեֆլեքսոլոգիական» ուղղությունը մանկավարժության մեջ, «դպրոցի մահացման» հակալենինյան տեսությունը։ Արհամարհանքով մանկավարժության «էմպիրիկա» և «գիտականակերպ դիսցիպլին» հայտարարելը։

Մանկավարժության և մանկավարժներին իրենց լրիվ իրավունքներում վերականգնելը (Կենտկոմի որոշումը «Մանկաբանական աղավաղումները Լուսժողկոմատների սիստեմում»)։

## Մանկավարժության փիլիսոփայական հիմունքները

Դիալեկտիկա-մատերիալիստական փիլիսոփայությունը որպես խորհրդային մանկավարժության մեթոդոլոգիական հիմք: Դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդը որպես մանկավարժական տեսության կառուցման միակ գիտական հիմք:

Բուրժուական մանկավարժության փիլիսոփայական հիմունքների քննադատությունը:

## 3. Կոմունիստական դաստիարակության նպատակը

Մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրները նոր մարդիկ—կոմունիստներ դաստիարակելու մասին: Նոր մարդու իդեալն ըստ մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրներ Մարքսի, Էնգելսի, Լենինի և Ստալինի: Ստալինյան դարաշրջանի նոր մարդիկ Խորհրդային Միությունում՝ Լենինի և Ստալինի մերձավոր աշակերտները և զինակիցները, Խորհրդային Միության հերոսները և ստախանովականները: Սոցիալիստական պետության քաղաքացիները որպես Ստալինյան Սահմանադրության մեջ շարադրված իրավունքների և պարտականությունների կրողներ:

Կոմունիստական դաստիարակության նպատակի գիտականությունն ու կոնկրետությունը:

Մարքս-լենինյան ուսմունքն անհատի բազմակողմանի զարգացման մասին: Կոմկուսակցության ծրագիրը կոմունիստական հասարակության բազմակողմանի զարգացած անդամներ դաստիարակելու մասին: Մարդու բազմակողմանի զարգացումը, որպես մտավոր կրթության, պոլիտեխնիկական կրթության, բարոյական, էսթետիկական և ֆիզիկական դաստիարակության միասնական դիալեկտիկական պրոցես:

Մարքս-լենինյան ուսմունքը ժառանգականության, միջավայրի և դաստիարակության մասին:

Բուրժուական մանկավարժների առաջ քաշած դաստիարակության—«ընդհանրապես մարդ դաստիարակելու», «կյանքի համար պատրաստելու» և այլ նպատակների քննադատությունը:

Անհատի զարգացման բուրժուական ռեակցիոն տեսությունների քննադատությունը՝ այսպես կոչված «բիոգենետիկ օրենքը» մանկավարժության մեջ. բուրժուական ռեակցիոն տեսությունը



ռասաների անհավասարժեքության մասին. մանկաբանական կեղծ գիտության գլխավոր «օրենքը»—«երեխաների ճակատագրի ֆատալիստական պայմանավորվածությունը բիոլոգիական և սոցիալական գործոններով, ժառանգականությամբ և ինչ որ անփոփոխ միջավայրի ազդեցությամբ»:

## 4. Մանկավարժության աղբյուրները

Խորհրդային Միության գյուղական աշխատողների լայն և բազմակողմանի փորձը: Խորհրդային Միության դպրոցների, ժողկրթության բաժինների և Լուսժողկոմատների փաստաթղթերը: Մանկավարժական հարցերի ուսումնասիրություններ և մենոգրաֆիաները ԽՍՀՄ-ում: Բուրժուական ժառանգության քննադատական վերամշակումն ու օգտագործումը:

## 5. Գիտական-մանկավարժական ուսումնասիրության մեթոդները

Գիտական-մանկավարժական ուսումնասիրության մեթոդներին առաջադրվող սկզբունքային պահանջները: Գիտական մանկավարժական ուսումնասիրության մեթոդների բնութագրումը. դիտողություն (այս մեթոդի բազմատեսակությունը), փաստաթղթերի ուսումնասիրություն, մանկավարժական հետազոտություն, մանկավարժական էքսպերիմենտ:

Մանկավարժական ուսումնասիրության տվյալների մշակման վիճակագրական մեթոդը: Մանկավարժական ուսումնասիրության հակագիտական մեթոդների (տեստերի, անիմաստ հարցաթերթերի և այլն) քննադատությունը:

## 6. Մանկավարժությունը յեվ մանկավարժական այլ գիտությունները

Մանկավարժությունը գիտությունների սիստեմում: Մանկավարժական գիտությունների նպատակները, խնդիրներն ու բովանդակությունը: Մանկավարժական գիտությունների սիստեմը՝ մանկավարժության պատմություն, դպրոցական առողջա-

պահուՁյուն, հանրակրթական ուսումնական առարկաների դասավանդման մեթոդիկաները, հատուկ մանկավարժություն (սուրդո, տիֆլո, օլիգոֆրեն մանկավարժություն)։

Մանկավարժությունը մանկավարժական գիտությունների սիստեմում։

Մանկավարժության կապը հոգեբանության և նրան հարակից այլ գիտությունների հետ։

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

# Յերեխաների դաստիարակությունը մինչեվ դպրոց գնալը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Մինչ նախադպրոցական տարիքի յերեխաները և նրանց դաստիարակությունը։
2. Նախադպրոցական տարիքի յերեխաները և նրանց դաստիարակությունը։

## 1. Մինչ նախադպրոցական տարիքի յերեխաները յեվ նրանց դաստիարակությունը

Մինչ նախադպրոցական տարիքի յերեխայի առանձնահատկությունները։ Յերեխայի խնամքն ու ֆիզիկական դաստիարակությունը մինչև մեկ տարեկան հասակը։ Փոփոխությունները մանկան սոմատիկայի, մոտորիկայի և պսիխիկայի մեջ՝ նրա հետագա զարգացման կապակցությամբ։

Ֆիզիկական դաստիարակություն, զգայարանների զարգացում։ Մանկան կենսագործունեությունը։ Խաղը և յերեխայի ծանոթացումն իրեն շրջապատող իրականության հետ։ Մանկան հարաբերության դաստիարակությունը դեպի իրեն շրջապատող աշխարհը։ Մտածողության և խոսքի զարգացումը։ Եմոցիաների, ունակությունների և սովորությունների դաստիարակությունը։ Կոլեկտիվիզմի տարրերի դաստիարակությունը։ Մանկան «բնածին եգոիզմի» բուրժուական տեսության վրա գիտական և ռեակցիոն բնույթը։ Ընտանիքի դերը մինչ նախադպրոցական



տարիքի յերեխաների դաստիարակության մեջ։ Կոմկուսակցության և Խորհրդային Կառավարության հոգատարությունը մինչ նախադպրոցական տարիքի յերեխաների դաստիարակության մասին։ Հոգատարություն մոր և մանկան մասին. մանկամսուրների և կոնսուլտացիաների ցանցի ծավալումը։

## 2. Նախադպրոցական տարիքի յերեխաները յեվ նրանց դաստիարակությունը

Նախադպրոցական տարիքի յերեխաների առանձնահատկությունները։ Նախադպրոցականի կենսագործունեության բովանդակությունը։ Ֆիզիկական դաստիարակությունը։ Խաղերի մանկավարժական կազմակերպումը։ Խաղալիքներ։ Յերեխաներին իրենց շրջապատող աշխարհի հետ ծանոթացնելու մանկավարժորեն կազմակերպումը։ Մանկան հարաբերության դաստիարակությունը դեպի իր շրջապատը։ Մտածողության և խոսքի զարգացումը։ Եմոցիաների, ունակությունների և սովորությունների դաստիարակությունը։ Կոլեկտիվիզմի տարրերի դաստիարակությունը։ Հասարակական-քաղաքական դաստիարակության տարրերը։ Կրթական աշխատանքի տարրերը նախադպրոցական տարիքի յերեխաների հետ (ծանոթացում բնության հետ, գրագիտություն, թվաբանական պատկերացումներ և այլն)։

Նախադպրոցականի հարցերը. «ինչպե՞ս է սա կոչվում». «սա ի՞նչ է». «ինչու»։ Այս հարցերի պատասխաններին առաջադրվող պահանջները։ Նախադպրոցական տարիքի յերեխաների կրթական աշխատանքի մեթոդիկայի առանձնահատկությունները։ Մանկական գրքեր (հեքիաթներ, պատմվածքներ, ոտանավորներ, հետաքրքրաշարժ նկարներ և այլն) և դիդակտիկական այլ ձեռնարկներ։

Նախադպրոցական տարիքի յերեխաների դաստիարակության մեջ յեղած խեղաթյուրումների քննադատությունը։

Մանկապարտեզը և նրա դերը նախադպրոցական դաստիարակության մեջ։

Ընտանիքի դերը նախադպրոցական տարիքի յերեխաների դաստիարակության մեջ։ Մանկապարտեզի ազդեցությունը յերեխաների դաստիարակության վրա ընտանիքում։ Կոմկուսակ-

ցության և Խորհրդային կառավարության հոգատարությունը նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության մասին՝ մանկապարտեզների, մանկահրապարակների նախադպրոցական մանկական տների և սանատորիաների ցանցի ծավալումը նախադպրոցական երեխաների համար:

ՅԵՐՐՈՐԴ ՄԱՍ

## Դպրոցական տարիքի յերեխաները

Խորհրդային դպրոցի կրտսեր, միջին և ավագ տարիքի աշակերտության մանկավարժական բնութագիրը: Խորհրդային յերեխաների (ուսման գերազանցիկների, շքանշանակիր յերեխաների, հերոս յերեխաների, առանձնապես տաղանդավոր յերեխաների) բնութագիրը: Կոմկուսակցության ղեկավարների և Խորհրդային Միության նշանավոր մարդկանց դպրոցական տարիները:

Որոշ տարիքի յերեխաների ընդհանուր և անհատական առանձնահատկությունների հաշվառման նշանակությունը մանկավարժական աշխատանքներում:

Կենտկոմի 32 թվի օգոստոսի 25-ի վորոշումը՝ ուսումնական տարվա ամեն մի քառորդի վերջում ուսուցիչների կողմից աշակերտների բնութագրում կատարելու մասին: Տվյալներ այդ բնութագրերի համար (առաջադիմություն, կարգապահություն):

Աշակերտության դպրոցական բնութագրերի լավագույն օրինակները:

Խորհրդային յերեխաների դաստիարակության պայմանները՝ սոցիալիզմի յերկիր, դաստիարակության կոմունիստական սիստեմ՝ դպրոցում և ընտանիքում, ստալինյան սիրալիր վերաբերմունք դեպի յերեխաները, խորհրդային յերեխաների ֆիզիկական և ընդհանուր զարգացման բարձր մակարդակը, նրանց օժտվածությունն ու տաղանդավորությունը: Բուրժուական մանկավարժության և կեղծ գիտության--մանկաբանության այսպես կոչված յերեխաների «տիպերի» տեսությունների վոչ գիտականությունը:



ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

## ԽՍՀՄ-ի պետական քաղաքականությունը ժողկրթության բնագավառում յեվ դպրոցը

Լենինը, Ստալինը և կուսակցական վորոշումները դպրոցի և նրա խնդիրների, աշակերտի և ուսուցչի դպրոցական աշխատանքների մասին:

ՀամԿ(բ)Կ ծրագրի պահանջները ժողովրդական լուսավորության բնագավառում: Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը ժողովրդական լուսավորության և կուլտուրայի բնագավառում: Յեկեղեցու բաժանումը պետությունից և դպրոցի բաժանումը յեկեղեցուց:

Խորհրդային Միության բոլոր քաղաքացիների կրթության իրավունքի ապահովումը:

Ընդհանուր պարտադիր ուսուցման կիրառումը և անգրագիտության վերացումը:

Աճող սերնդի ընդգրկումը Խորհրդային Միության դպրոցներում:

Խորհրդային դպրոցի պատմական դերը: Խորհրդային դպրոցի կառուցման սկզբունքները: Տարրական և միջնակարգ դպրոցների կառուցվածքը:

Կադրերի պատրաստում: Մասնագիտական, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունները և նրանց կապն ընդհանուր հանրակրթական դպրոցի հետ: Միջնակարգ դպրոցի աշակերտության մասնագիտության ազատ ընտրությունը: Պետության օգնությունը միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողներին:

Դպրոցներ և դասընթացներ մեծահասակների համար: Բանվորների և կոլտնտեսականների կողմից գիտության և տեխնիկայի տիրապետելը:

Կապիտալիստական յերկրների ժողովրդական կրթության բնագավառում բուրժուազիայի վարած քաղաքականության քննադատությունը:

Գիտության, կուլտուրայի և դպրոցի կործանումը բուրժուա-նվաճողական յերկրներում:

Առաջավոր գիտության, կուլտուրայի, դպրոցի ծաղկումը ԽՍՀՄ-ում:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

# ԿՐԹՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
# ԴԻԴԱԿՏԻԿԱ

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝**


1. Մտավոր զարգացում. ընդհանուր և պոլիտեխնիկական կրթություն։
2. Կրթության և ուսուցման խորհրդային տեսության սկզբունքները։
3. Կրթության և ուսուցման բովանդակությունը խորհրդային դպրոցում (ուսման պլաններ, ծրագրեր և դասագրքեր)։
4. Ուսումնական աշխատանքի կազմակերպումը։
5. Ուսուցման մեթոդները։
6. Աշակերտության գիտելիքների ստուգումն ու գնահատումը։
7. Ուսումնական ձեռնարկները։


## 1. Մտավոր զարգացում, ընդհանուր յեվ պոլիտեխնիկական կրթություն

Մտավոր զարգացման և կրթության նպատակները.—մարքս-լենինյան մտածողության և աշխարհայեցողության ձևավորումը։ Գիտությունների հիմունքների տիրապետումը։ Մարքս-Էնգելս-Լենին-Ստալինը կոմունիստական կրթության բովանդակության և բնույթի, հանրակրթական գիտությունների և լենինիզմի գիտակցված ու կայուն տիրապետելու մասին։

Լենին-Ստալինի ուսմունքը տեսության նշանակության մասին։

Տեսության կապը պրակտիկայի հետ։ Ֆիզիկական և մտավոր աշխատանքների միջև յեղած կտրվածության վերացումը։ Իմացության մարքս-լենինյան տեսությունը վորպես խորհրդային դիդակտիկայի տեսական հիմք։



Ուսուցման պրոցեսի յուրահատկությունը և նրա տարբերությունը գնոսեոլոգիական իմաստով հասկացվող իմացության պրոցեսից։

Ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի և սինթեզի նշանակությունը մտավոր զարգացման և կրթության համար։

Մտավոր զարգացման և կրթության հարցերի մեկնաբանման աղավաղումների քննադատությունը ու կեղծ-գիտական մանկաբանական տեսությունները տարիքային լիմիտների, մտավոր զարգացման և կրթության զոնաների մասին։

Բուրժուական ռեակցիոն մանկաբանական տեսությունը մտավոր զարգացման և կրթության ֆատալիստական կանխորոշության մասին։ Կեղծ-գիտական մանկաբանական տեսությունը մտավոր զարգացմամբ յետ մնացող յերեխաների դատապարտվածության մասին։

Լենինը և Ստալինը բուրժուական դպրոցներում արվող ընդհանուր կրթության բնույթի մասին։ Խորհրդային դպրոցը վորպես հանրակրթական և պոլիտեխնիկական դպրոց։ (Կոմկուսակցության ծրագրի § 12 կետ 1-ին)։ Պոլիտեխնիկական կրթության բովանդակությունը (Լենին 30-րդ հատ. «Նշումներ՝ Կրուպսկայայի «Պոլիտեխնիզմի մասին» թեզիսների վրա»)։

Պոլիտեխնիկական կրթությունը և գիտության հիմունքների ուսումնասիրությունը։ (Կենտկոմի 1931 թ. սեպտեմբերի 5-ի վորոշումը տարրական և միջնակարգ դպրոցների մասին)։

Պոլիտեխնիկական կրթության հարցերում յեղած խեղաթյուրումների քննադատությունը—պոլիտեխնիկական դպրոցը գիտության հիմունքների ուսումնասիրությունից կտրելը, փոխարենը արհեստագիտության ու բազմարհեստագիտության առաջադրելը և դպրոցական ուսուցումը գործարանում տարվող աշխատանքով փոխարինելը (դպրոցը գործարանի ցեխ)։

Մարքսը պոլիտեխնիկական կրթության իրացման անհնարինության մասին՝ կապիտալիզմի տիրապետության պայմաններում։

## 2. Խորհրդային դիդակտիկայի սկզբունքները

Գիտության հիմունքների գիտակցական և կայուն յուրացումն աշակերտության կողմից։ Ուսուցման կապը հասարակա-

կան-արտադրական աշխատանքի և ֆիզիկական դաստիարակության հետ, որպես միակ միջոց բազմակողմանի զարգացած մարդիկ պատրաստելու (Մարքս)։ Աշակերտների հասարակական-արտադրական աշխատանքը դպրոցի ուսման և դաստիարակության նպատակներին ենթարկելը (Կենտկոմի 31 թ. սեպտեմբերի 5-ի որոշումը)։ Ուսուցման, կրթության և դաստիարակության միացումը դասակարգային պայքարի և սոցիալիզմի կառուցման հետ (Լենին-Ստալին)։ Ստալինյան սիրալիր վերաբերմունք դեպի երեխաները։

Դաստիարակող ուսուցում։ Զննականության սկզբունքը ուսուցման մեջ։

Զննականության նշանակությունը գիտելիքների գիտակցական և կայուն յուրացման համար։ Աշակերտության ակտիվ աշխատանքը գիտելիքների, ունակությունների և կարողությունների գիտակցական ու կայուն յուրացման մեջ։ Աշակերտների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը ուսուցման և կրթության ընթացքում։ Ուսումնական նյութի համապատասխանումը երեխաների կարողություններին։ Խորհրդային դպրոցի պրակտիկայում ստուգված ուսուցման բազմազան մեթոդների կիրառումը ուսուցչի կողմից։

Մանկավարժի առաջատար դերը ուսուցման գործում։ Կոնկրետից դեպի վերացականը, ծանոթից դեպի անծանոթը, պարզից դեպի բարդը, հեշտից դեպի դժվարը դիդակտիկական կանոնների ըմբռնումը ու օգտագործումը խորհրդային մանկավարժության մեջ։

Բուրժուական մանկավարժության կրթության և ուսուցման տեսության սկզբունքների քննադատությունը (աշակերտության գիտակցության մեջ կապիտալիստական հասարակարգի անխորտակելիության կեղծ գիտական դրույթներ ձևավորելն ու ամրապնդելը, իրերի և երևույթների մետաֆիզիկական ուսումնասիրությունը, գիտության ֆալսիֆիկացիան և նրա քաղաքական ռեակցիոն ուղղությունը, աշակերտության կողմից գիտելիքների գիտակցական յուրացման արգելակումը, դոգմատիզմ, ֆորմալիզմ և սխոլաստիկան դասավանդման և գիտությունների յուրացման մեջ, աշակերտության պասսիվ դերը գիտելիքների, ունակությունների և կարողություն-



ների յուրացման մեջ, կապի բացակայությունը ուսուցման, ֆիզիկական դաստիարակության և հասարակական-արտադրական աշխատանքների միջև, մտավոր և ֆիզիկական աշխատանքների իրարից անջատելը)։

Ուսուցման և կրթության հոգեբանական-մանկավարժական հիմունքները։

Ուշադրություն. նրա դաստիարակությունը և նրա դերը ուսուցման մեջ։ Հետաքրքրություն՝ ուսուցման պրոցեսում հետաքրքրություն ստեղծելը։ Հետաքրքրության դերը գիտությունների հիմունքների տիրապետման մեջ։

Հիշողություն. աշակերտության հիշողության զարգացումը և կատարելագործումը. հիշողության դաստիարակություն, բերանացի սովորելու մեթոդների ճիշտ կիրառումը. ունակություններ, վարժությունների դերն ու բնույթը, ունակությունները գիտակցաբար ձեռք բերելը։ Երևակայություն. Նրա դերը կրթական աշխատանքում, ստեղծագործական երևակայության դաստիարակություն։ Մտածողություն, գիտության հիմունքների ուսուցման առաջատար դերը մտածողության զարգացման մեջ։ Զննականություն. գիտական դասակարգում դասավանդման մեջ և նրանց դերը մտածողության զարգացման համար։

Խոսք, բանավոր և գրավոր խոսքի զարգացումը, տրամաբանորեն ուղիղ, ճշգրիտ և արտահայտիչ խոսք։ Էմոցիաներն ու նրանց նշանակությունը կրթության և ուսուցման գործում։ Էմոցիաների դաստիարակությունը։ Կամք. ուսուցման պրոցեսում բոլշևիկյան կամքի զարգացումը։ Կամքի դերն ուսուցման մեջ։

## Կրթության և ուսուցման բովանդակությունը խորհրդային դպրոցում

*(Ուսման պլաններ, ծրագրեր, դասագրքեր)*

Խորհրդային դպրոցի կրթության և ուսուցման բովանդակության կախումը դպրոցի ուսումնա-կրթական և դաստիարակչական խնդիրներից և աշակերտության տարիքից։

Խորհրդային դպրոցի ուսումնական պլանները։ Ուսումնական պլանների տարիկային կառուցվածքը։ Ուսումնական պլանում հանրակրթական առարկաների ընտրության հիմունք-

ները տարրական, վոչ-լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների համար:

Խորհրդային դպրոցի ծրագրերը: Խորհրդային դպրոցի գիտական-մարքսիստական առարկայական կայուն ծրագրերի կառուցման սկզբունքները: Ծրագրերի կրթա-դաստիարակչական նյութերի դիալեկտիկական-մատերիալիստական կազմակերպման սիստեմը:

Գիտության հիմնական փաստերի շարադրումը գիտական-մարքսիստական սիստեմով: Գիտելիքների, կարողությունների և ունակությունների խիստ սահմանագծված շրջանակն ուսուցման յուրաքանչյուր տարվա ամեն մի առարկայի համար: Ծրագրերի համապատասխանումը աշակերտների տարիքին: Առանձին առարկաների ծրագրերի շաղկապումը: Սոցիալիստական շինարարության նյութերն ուսումնական առարկաների դասընթացում:

Կոմպլեքս-թեմատիկական և կոմպլեքս-պրոյեկտային սիստեմով կառուցվող ծրագրերի սկզբունքային պակասավորությունը: Տարրական, վոչ-լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների առարկաների նպատակները, խնդիրները ու բովանդակությունը:

Մայրենի լեզու և գրականություն.—*Մայրենի լեզվի ընդհանուր կրթական նշանակությունը: Աշակերտության գրագիտությունը, վորպես մայրենի լեզվի դասավանդման կարևորագույն խնդիրներից մեկը: Քերականության ուսումնասիրության կրթական նշանակությունը: Բանավոր և գրավոր խոսքի կուլտուրան և նրա նշանակությունը կրթության և դաստիարակության համար: Դեպի մայրենի լեզուն սեր դաստիարակելը: Ռուսաց լեզվի դասավանդման նշանակությունը Խորհրդային Միության վոչ ռուսական դպրոցներում: Գրականության կրթական նշանակությունը: Գրականության դերը աշակերտության ընդհանուր կրթական տեսածիրն ընդլայնելու գործում: Մայրենի լեզվի և գրականության նշանակությունը դպրոցի դաստիարակչական խնդիրները լուծելու մեջ:*

Մաթեմատիկա.—*Մաթեմատիկայի կրթական և դաստիարակչական նշանակությունը: Մաթեմատիկայի նշանակությունը տրամաբանական մտածողության, կամքի և բնավորության*



*զարգացման համար: Մաթեմատիկայի դերը ժամանակակից տեխնիկայի և բնության ուժերին տիրապետելու մեջ:*

*Մաթեմատիկայի նշանակությունը պոլիտեխնիկական կրթության մեջ:*

*Մաթեմատիկական դիսցիպլինները և նրանց նպատակադրումները:*

Պատմություն.—*Մարքսը, Էնգելսը Լենինը և Ստալինը պատմության կրթական և դաստիարակչական նշանակության և նրա դասավանդման մասին:*

*Պատմության նշանակությունը մարքս-լենինյան աշխարհայացողության ձևավորման մեջ: Ինտերնացիոնալիզմ, խորհրդային հայրենասիրություն, դեպի կոմկուսակցությունը և նրա ղեկավարներ՝ Լենինը, Ստալինը սեր և անձնվիրություն դաստիարակելը: Պատմական գիտելիքների նշանակությունն այլ ուսումնական դիսցիպլինների ուսումնասիրության գործում:*

*ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումը Խորհրդային Միության դպրոցներում քաղաքացիական պատմության դասավանդման մասին (1934 թ. մայիսի 16):*

*ԽՍՀՄ-ի պատմության և նոր պատմության դասագրքերի կոնսպեկտների առթիվ յեղած դիտողությունները (Ստալին, Կիրով, Ժդանով): Ստալինը կոմկուսակցության պատմության դասագրքի մասին: Կառավարական հանձնաժողովի ժյուրիի վորոշումը միջնակարգ դպրոցի 3-րդ և 4-րդ դասարանների համար ԽՍՀՄ-ի պատմության լավագույն դասագրքի կոնկուրսի առթիվ: Պատմության դասընթացի դասավանդման բաժանումն ըստ դասարանների:*

ԽՍՀՄ-ի Սահմանադրության *դասավանդումը և նրա կրթական ու քաղաքական-դաստիարակչական նշանակությունը:*

Աշխարհագրություն.—*Աշխարհագրության կրթադաստիարակչական նշանակությունը մարքս-լենինյան աշխարհայացողության ձևավորման, ինտերնացիոնալիզմի և խորհրդային հայրենասիրության դաստիարակման գործում:*

*Նույն նպատակներով ԽՍՀՄ-ի աշխարհագրության ուսումնասիրության առանձնահատուկ նշանակությունը դպրոցում:*

Բնագիտություն.—*Մարքսը, Էնգելսը, Լենինը և Ստալինը բնական գիտությունները տիրապետելու մասին: Բնագիտու-*



2564
40

նշանակությունը գպրոցում։
թյան կրթա-դաստիարակչական նշանակությունը մարքս-լենինյան աշ-
Բնագիտության դերը յերեխաների մեջ մարքս-լենինյան աշ-
խարհայացողության մշակելու գործում։ Միջնակարգ դպրոցի
ծրագրով աշակերտների կողմից դարվինիզմին ծանոթանալու
նշանակությունը։
Բնագիտությունը և մարտնչող աթեիզմի դաստիարակու-
թյունը։
Բնագիտության նշանակությունը պոլիտեխնիկ կրթու-
թյան համար։
Սոցիալիստական շինարարության նյութերի օգտագործումը
Բնագիտության դասերի ընթացքում։ Բնագիտության դասըն-
թացն ըստ դպրոցի տարբեր դասարանների։
Ֆիզիկա և քիմիա.—Ֆիզիկայի և քիմիայի նշանակությու-
նըն ընդհանուր և պոլիտեխնիկական կրթության համար։ Ֆի-
զիկայի և քիմիայի նշանակությունը մարքս-լենինյան մտածո-
ղության ձևավորման և հակակրոնական դաստիարակության
համար։ Ֆիզիկան և քիմիան սոցիալիստական շինարարության
և ԽՍՀՄ-ի պաշտպանության գործում։ Ֆիզիկայի և քիմիայի
ծրագրերի հիմնական բաժինները միջնակարգ դպրոցի տարբեր
դասարաններում։
Օտար լեզուներ.—Օտար լեզուների նշանակությունն ընդ-
հանուր կրթության համար։ Ենգելսը հին և նոր լեզուների դա-
սավանդման մասին։
Օտար լեզուներն ու մայրենի լեզուն։ Օտար լեզուների
(ինտեր-
դասավանդման դաստիարակչական նշանակությունը
նացիոնալ դաստիարակություն)։
Նկարչություն և գծագրություն.—Կերպարվեստների և գրա-
Նկարչության նշանակությունը բազմակողմանի զարգացած մարդ-
կության նշանակությունը բազմակողմանի զարգացած մարդ
դաստիարակելու և կրթելու գործում։ Նկարչության դերը
դրության մեջ։ Գծագրու-
թյունների գեղարվեստական դաստիարակության մեջ։ Գծագրու-
թյան դերը յերեխաների կոնստրուկտիվ գործունեության և
պոլիտեխնիկական կրթության գործում։
Յերաժշտություն, յերգ և ռիթմիկա.—Նրանց դերը աշա-
կերտների գեղարվեստական դաստիարակության գործում։ Յերաժըշ-
տության ու յերգի ծրագրերի հիմնական բաժինները տարրա-
կան և միջնակարգ դպրոցում։



4514
40

դաստիարակչական և կրթական ... 
դաստիարակչական և միջնակարգ դպրոցներում։
հիմնական բաժինները տարրական և միջնակարգ դպրոցներում։
Դասագիրք և նրա նշանակությունը աշակերտության կըր-
թության և ուսուցման մեջ։ Լենինն ու Ստալինը դասագրքի
մասին։ Դասագրքին առաջադրվող պահանջները նրա ձևավոր-
ման և բովանդակության տեսակետից։
ՀամԿ(բ)Կ ԿԿ 33 թ. փետրվարի 12-ի և 35 թ. օգոստոսի
7-ի վորոշումները տարրական և միջնակարգ դպրոցների դա-
սագրքերի մասին։
Ազգայնականների խորհրդային դպրոցի համար դասագրքեր
կազմելու գործում։
Նախահեղափոխական դպրոցի լավագույն դասագրքերի
քննությունը։
Խորհրդային դպրոցի լավագույն դասագրքերի վերլուծու-
թյունը (ԽՍՀՄ-ի պատմության և այլ դասագրքեր)։

## 4. Ուսումնական աշխատանքների կազմակերպումը

Ուսումնական աշխատանքներին առաջադրվող մանկավար-
ժական պահանջները։
Ուսումնական տարին։ Ուսումնական տարվա բաժանումը
քառորդների։
Ուսումնական օրերի թիվը ուսումնական տարում։ Արձա-
կուրդներն ու նրանց տևողությունը։ Ուսումնական շաբաթ և
ուսումնական օր։ Դասերի խիստ և վորոշակի դասացուցակ։
Դասերի քանակը յուրաքանչյուր դասարանում։ Դասացուցակ
կազմելու սկզբունքները։ Դասերի տևողությունը և դասամի-
ջոցները։ Դասացուցակի հարցերում յեղած աղավաղումների
քննադատությունը (այսպես կոչված «օդատ», «սահուն» դա-
սացուցակ)։
Դասարան։ Սովորողների կայուն կազմը դասարանում։ Դա-
սարանների կոմպլեկտավորման սկզբունքները։ Կեղծ գիտու-
թյան՝ մանկաբանության և բուրժուական մանկավարժության տեսակ-
կողմից առաջ քաշված դասարանների կոմպլեկտավորման տեսակ-
ցիոն սկզբունքների («մշտական բրիգադներ» և այլն) քննադա-
տությունը։

Խորհրդային դպրոցի ներքին կարգ ու կանոնը և ռեժիմը։ Աշակերտների ընդունելությունը։ Դպրոց ընդունելիս ուշադիր և զգայուն վերաբերմունք դեպի ծնողներն ու երեխաները։ Երեխաների փոխադրումը մի դպրոցից մյուս դպրոց։

Դասը որպես ուսումնական աշխատանքի կազմակերպման հիմնական ձև խորհրդային դպրոցում։ Դասերի անխզելի կապը խորհրդային դպրոցում։

Դասերի կրթա-դաստիարակչական խնդիրները։ Դասի կառուցման կախվածությունն այդ խնդիրներից։ Դասավանդման առարկայի, դասի թեմայի և աշակերտների տարիքի յուրահատկությունների հաշվառումը։ Դասերի գիտական դասակարգման սկզբունքները։ Դասերի հիմնական տիպերը՝ նոր գիտելիքների հաղորդում, նախապես հաղորդվածի ամրապնդում, հսկողություն սովորողների գիտելիքների վրա։ Սովորողների աշխատանքը դասի ընթացքում ուսուցչի ղեկավարությամբ։ Ուսուցչի դասին նախապատրաստվելը։ Դասի կոնսպեկտ և պլան։ Անցած դասի անալիզը։ Ցուցադրական դասերը, որպես դպրոցական աշխատանքների լավագույն փորձի փոխանակման միջոց։

Դասի, որպես ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևի բացասման քննադատություն. դասի փոխարինումը «ազատ պարապմունքով» ուսուցչով և առանց ուսուցչի։ Դաստիարակչական աշխատանքի անտեսումը դասի ընթացքում։ Դասը հարցումների և առաջադրանքների վերածելը։

## 5. Ուսուցման մեթոդները

Խորհրդային դիդակտիկայի սկզբունքները, որպես ուսուցման մեթոդների և ձևերի հիմք։ Խորհրդային դպրոցի պրակտիկայով ստուգված՝ ուսուցման մեթոդների և ձևերի բազմազանությունը։ Ուսուցման մեթոդների բնութագիրը։

1. Առարկայի շարադրումն ուսուցչի կողմից.—Ուսուցչի շարադրման առաջադրվող պահանջները՝ շարադրման տրամաբանական պլան, ամբողջացած բովանդակություն, շարադրանքի գաղափարական ուղղվածություն, շարադրանքի համապատասխանումը գիտակցական ըմբռնման և կայուն կերպով հիշելու հնարավորություններին։ Խոսքի կուլտուրան և ձայնին



տիրապետելը։ Ուսուցչի կողմից դիտողականություն կիրառելը թեմայի շարադրման ընթացքում։

Ուսուցչի պատմելը, ուսուցչի պարզաբանելը, դպրոցական դասախոսություններ։

2. Զրույց.—Զրույցի առարկան։ Զրույցի պլանը։ Հարցեր։ Հարցերի կախում ունենալը մանկավարժական նպատակից։ Հարցերին առաջադրվող պահանջները։ Աշակերտների պատասխաններին առաջադրվող պահանջները։

Զրույցի ամփոփումը ուսուցչի կողմից։ Զրույցի ընթացքում աշակերտության կողմից ձեռք բերած նոր գիտելիքների ամրապնդումը։ Զրույցի ընթացքում ուսուցչի կողմից գնահատական իրեր օգտագործելը։ Այսպես կոչված «ազատ զրույց»-ի քննադատությունը, զրույցն էվրիստիկական մեթոդով և կատեխիզիսով փոխարինելը, որոնք կիրառվում էին հին դպրոցում։

3. Երեխաների աշխատանքը դասագրքով.—Դասագրքի օգտագործումը դասի ընթացքում։ Նյութի սիստեմատիկ շարադրանքն աշակերտության կողմից՝ դասագրքի համաձայն։ Ուսուցչի կողմից առաջադրված հարցի պատասխանը դասագրքի համապատասխան բաժնում գտնելու հմտություն։ Դասագրքի նյութերի կոմբինացիան՝ տրված հարցերին պատասխանելու համար, դասագրքով վարժություններ կատարելը։ Դասագրքի նյութը գրաֆիկայով հաղորդելը։ Դասագրքում շարադրված առանձին թեմաների կոնսպեկտներ և պլաններ կազմելը։ Դասագիրքը լրացնող լրացուցիչ ձեռնարկների ներգրավումը։

Դասագրքով ինքնուրույն կերպով աշխատելու ունակությունների զարգացումն աշակերտների մեջ։

4. Աշակերտների լաբորատոր աշխատանքները ուսուցչի ղեկավարությամբ։ Լաբորատոր պարապմունքների տարբերությունն ուսուցման մյուս մեթոդներից։ Առարկաներ, որոնցով կարելի է և պետք է աշակերտության հետ տանել լաբորատոր աշխատանքներ։ Լաբորատոր աշխատանքներում չեղած աղավաղումները՝ «լաբորատոր-բրիգադային մեթոդ»։ Ուսուցման մեթոդների ընտրությունը կախված դասի մանկավարժական խնդիրներից։

Էքսկուրսիա.—Դպրոցական էքսկուրսիաների հաստատուն դասատախտակ՝ դասավանդման պլանի համապատասխան։ Էքս-

[illegible]

[illegible]

կուրսային անցկացման պլանը։ Եքսկուրսիայի նախնական
կուրսիայի անցկացման պլանը։ Աշակերտների նախա-
նախապատրաստումն ուսուցչի կողմից։ Աշակերտների նախա-
պատրաստումը էքսկուրսիային։ Ուսուցչի և ցերեկային աշխատան-
քի մեթոդները էքսկուրսիայի ընթացքում։ Էքսկուրսիայի արդ-
յունքների ամփոփումը դպրոցում։

Ցերեխաների վարժությունները.—Վարժությունների նպա-
տակադրումները։ Բանավոր, գրավոր, գրաֆիկական և տեխնի-
կական վարժությունները։ Տարրական և միջնակարգ դպրոցնե-
րի աշակերտների վարժություններին առաջադրվող պահանջ-
ները։ Գրավոր աշխատանքների ուղղումն ու վերլուծությունը։
Գրավոր և այլ վարժությունների գերազանց կատարման կազ-
մակերպումը։ Սխալների կանխման մանկավարժական միջոցա-
ռումները։

Վարժությունների մեթոդիկայի գրվածքում ցեղած պա-
կասումների քննադատությունը։
Իլյուստրացիոն և դեմոնստրացիոն ուսուցման մեթոդների
կիրառման ընթացքում։ Փորձերի և նկարների ցուցադրում,
պրոեկցիոն լապտերի, կինոյի և ստերեոսկոպի օգտագոր-
ծումը։ Բաշխվող նյութերի գործադրումը դասի ժամանակ։
Աշակերտների տնային աշխատանքները և նրանց կատարու-
մը.—Աշակերտներին տնային աշխատանքներ տալու մեթոդի-
կան. առաջադրությունները և դրանց կատարման ուղիների պար-
զությունն աշակերտների համար։ Աշակերտության տնային աշխա-
տանքների կապը դասի աշխատանքների հետ։ Ուսուցչի օգնու-
թյունը աշակերտությանը՝ տնային աշխատանքների կատարման
ընթացքում։

Աշակերտության տնային աշխատանքների ստուգումն ու
վերլուծումը դասարանում։

Լրացուցիչ պարապմունք աշակերտության հետ.—Այդ պա-
րապմունքների կազմակերպումը դասի ընթացքում և դասից
հետո ուսուցչի ղեկավարությամբ։ Ցետ մնացող աշակերտների
օգնության գործի կազմակերպումը։

## 6. Աշակերտների գիտելիքների ստուգումը յեվ գնահատությունը

Դպրոցական աշխատանքների հաշվառման հիմքերը։ Աշա-
կերտների գիտելիքների հաշվառման պլանն ու մեթոդիկան։

Աշակերտների առաջադիմության հաշվառման ստանդարտ
Աշակերտների առաջադիմության քննադատությունը։ Գիտելիքների գնահա-
մեթոդների՝ տեստերի քննադատությունը։ Գիտելիքների գնահա-
տության, գնահատականների նորմաները (չափանիշները)։
Տարեկան ստուգողական քննությունները և նրանց նախապատ-
րաստումը։ Աշակերտների առաջադիմության ցուցանիշները։
Անառաջադիմության պատճառների վերլուծությունը։ Երկ-
րորդ տարեցիության պատճառները։ Երկրորդ տարեցիության
վերացման միջոցները։

Լրացուցիչ աշխատանքներ աշակերտության հետ՝ ամառա-
յին արձակուրդների ընթացքում։ Երկրորդ տարեցիության անխու-
անխուսափելիության մանկավարժական կեղծ գիտության տեսակ-
ցիոն տեսության քննադատությունը։

## 7. Ուսումնական ձեռնարկներ

Դպրոցական ուսումնական ձեռնարկների և նրանց ուսում-
նական աշխատանքներում գործադրելուն առաջադրվող դիդակ-
տիկ պահանջները։ Ձեռնարկների ընտրությունը թեմայի մշ-
շակման համար։ Ձեռնարկների դեմոնստրացիայի ձևերը դասի
ընթացքում։ Աշակերտների աշխատանքն ուսումնական ձեռնարկ-
ներով։ Ուսումնական ձեռնարկների տիպերը՝ դպրոցական տը-
պագրական ձեռնարկներ, դպրոցական ուսումնական գործիքներ,
մոդելներ, դպրոցական կոլեկցիաներ։ Ուսումնական ձեռնարկ-
ների ամեն մի տեսակին առաջադրվող մանկավարժական և
մեթոդական պահանջները։

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ

# ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝

1. Կոմունիստական բարոյականության դաստիա-
րակություն։ Հակակրոնական դաստիարակու-
թյուն։ Ինտերնացիոնալ դաստիարակություն։
Սոցիալիստական հայրենասիրության դաստիա-
րակություն։ Բոլշևիկյան ղգոնության դաստիա-
րակություն։ Գիտակցական դիսցիպլինայի, ընդ[illegible]

աշխատանքը և ագիտացիոն ակտիվությունը կոմունիստական վերաբերմունք աշխատանքի դաստիարակություն։ Սոցիալիստական հումանիզմի դաստիարակություն և գիտակցական վերաբերմունք դեպի սոցիալիստական համակեցության կանոնները։

2. Բոլշևիկյան կամքի և բնավորության դաստիարակություն։
3. Ֆիզիկական դաստիարակություն։
4. Էսթետիկական դաստիարակություն։

*Դաստիարակության, կրթության և ուսուցման կապը։ Կրթական աշխատանքի դաստիարակչական նշանակությունը։ Դաստիարակության խնդիրների կոնկրետությունը։ Ուսուցիչ-դաստիարակը։ Դասարանի ղեկավարը և նրա դաստիարակչական դերը։ Դպրոցի, ընտանիքի և կոմերիտմիության ու պիոներ կազմակերպության դաստիարակչական աշխատանքների համաձայնեցումը։*

## 1. Կոմունիստական բարոյականության դաստիարակություն

*Մարքսը, Էնգելսը, Լենինը, Ստալինը կոմունիստական բարոյականության մասին։ Նոր սերնդի կոմունիստական բարոյականության դաստիարակությունը։*

*Մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրները բուրժուական բարոյականության մասին։ Ակտիվ պայքար բուրժուական բարոյականության դեմ։ Դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների կուսակցականությունը։*

### ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

*ՀամԿ(բ)Կ ծրագրի պահանջը կրոնական հարաբերությունների բնագավառում (§ 13)։ Հակակրոնական ազատ պրոպագանդա ԽՍՀՄ-ում։ (ԽՍՀՄ-ի Սահմանադրություն, հոդված 124)։ Կրոնական հայացքների մերկացում։ Գիտական մարքսիստական հայացքների դաստիարակություն և ամրապնդում, մարտնչող աթեիզմի դաստիարակություն դպրոցում։ Հիշյալ խնդիրների լուծման միջոցները աշակերտության մեջ դասարանում և արտադասարանական աշխատանքների ժամանակ (նյութերի վերլուծում դասարանում, հակակրոնական գրականության ընթերցում, էքսկուրսիաներ դեպի հակակրոնական թանգարանները, մարտնչող անաստվածների բջիջի կազմակերպումը և այլն)։*

*«Անկրոն դաստիարակության» օպորտունիստական „տեսությունը" վորպես կրոնական դաստիարակության յուրահատուկ ձև և նրա քննադատությունը։ [illegible] կրոնական դաստիարակությունը կապիտալիստական յերկրներում։*

### ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

*ՀամԿ(բ)Կ, Կոմունիստական Ինտերնացիոնալի ծրագրի պահանջները ազգային հարաբերությունների բնագավառում։ Ստալինյան Սահմանադրությունը ԽՍՀՄ-ի քաղաքացիների իրավահավասարության մասին (հոդ. 123)։ Լենինյան ինտերնացիոնալիզմի դաստիարակություն։*

*Ինտերնացիոնալ դաստիարակության խնդիրները լուծելու դպրոցի միջոցները։ Աշակերտության ծանոթացումը խորհրդային իշխանության ազգային քաղաքականության հետ, Խորհրդային Միության ժողովուրդների ազգային կուլտուրաների, պատմության, տնտեսության, գրականության, արվեստի, կոմկուսակցության պատմության, դասակարգային պայքարի փորձի և ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման հետ։ Հատուկ կազմակերպված արտադպրոցական աշխատանքներ (ՄՈՊՐ-ի բջիջ, ինտերնացիոնալ յերեկոներ, ընթերցանություն, թատրոն, կինոնկարներ և այլն)։*

*Պայքար դպրոցում՝ տեղական նացիոնալիզմի և մեծապետական շովինիզմի թեքումների դեմ։ Ազգային թշնամության բորբոքումը, վորպես բուրժուական դաստիարակության հիմնական տարր։*

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

*Անսահման սիրո դաստիարակություն դեպի սոցիալիստական հայրենիքը, դեպի կոմկուսակցությունը, դեպի Խորհրդային Կառավարությունը և դեպի ԽՍՀՄ-ի ժողովուրդների մեծ առաջնորդ Ստալինը։ Պատասխանատվություն դեպի յերկրի բախտը և նրա պաշտպանությունը։ Խորհրդային հայրենասիրության դաստիարա-*

կության խնդիրները լուծելու դպրոցի միջոցները։ Սոցիալիստա-
կան հասարակակարգի և նոր մարդկանց, կոմունիզմի կառուցման
և դասակարգային պայքարի նվաճումների ցուցադրում։ Բոլշևիկյան
գիտությունն ու ակտիվ անհաշտություն դեպի դասակարգային թշնա-
մին։ Սոցիալիզմի յերկիրը պաշտպանելու պատրաստակամու-
թյան ու կարողության դաստիարակումը։ Ծանոթություն ԽՍՀՄ-ի
հայրենասերների կյանքի և հերոսությունների հետ։ Դասի կըր-
թական նյութերի ուղղությունը և բովանդակությունը, եքսկուր-
սիաների անցկացումը՝ ԽՍՀՄ-ի աշխատավորության դասակարգա-
յին պայքարի և սոցիալիզմի կառուցման հետ ծանոթանալու հա-
մար։ Հատուկ կազմակերպված արտադպրոցական աշխատանքներ
(համապատասխան գրականության ընթերցում, կինո-նկարների,
պիեսների ցուցադրում և այլն)։ Ուժերի ներածին չափով յերե-
խաների մասնակցությունը սոցիալիզմի կառուցման գործում։

## ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԶԳՈՆՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Լենինը և Ստալինը սոցիալիզմ կառուցողների բոլշևիկյան
զգոնության մասին։ Զգոնությունը, վորպես խորհրդային հայրե-
նասերների կարևորագույն հատկություններից մեկը։ Թշնամուն
ճանաչելու և սոցիալիստական հայրենիքի շահերը պաշտպանելու
կարողություն։
Յերեխաների բոլշևիկյան զգոնության դաստիարակու-
թյունը դպրոցում և ընտանիքում։ Զգոն վերաբերմունք դեպի
մարդիկ և նրանց գործունեությունը, իր վերաբերմունքը
դեպի ուրիշները և դեպի իր աշխատանքը։
Զափահասների և յերեխաների զգոն վերաբերմունքի որի-
նակները։

## ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Լենինը և Ստալինը գիտակցական կարգապահության դաս-
տիարակության մասին։ Ստալինյան Սահմանադրությունը խոր-
հրդային քաղաքացիների գիտակցական կարգապահության մա-
սին։ Խորհրդային դպրոցականների գիտակցական կարգապահու-
թյունը։ Դպրոցի սիստեմատիկ աշխատանքը դպրոցում և դպրո-
ցից դուրս գիտակցական կարգապահություն դաստիարակելու



համար։ Աշակերտության կողմից կարգ ու կանոնի և ռեժիմի պահ-
պանումը դպրոցում և ընտանիքում։ Աշակերտության վարքի
կանոնները դպրոցում և դպրոցից դուրս (դպրոցի կանոնադրու-
թյունը)։ Գիտակցական կարգապահության, առանձնապես սլոներ-
ների և դպրոցականների կարգապահության որինակների ցու-
ցադրումն աշակերտությանը։ Ուսուցչի անձնական որինակը։
Խրախուսանքի միջոցները։ Նրանց նշանակությունն առա-
ջադիմությունը և գիտակցական կարգապահությունը բարձրաց-
նելու գործում։ Տույժի միջոցները խորհրդային դպրոցում։
Ֆիզիկական պատիժների հակամանկավարժական նշանա-
կությունը։ Այդ միջոցի լրիվ արգելումը։ Խորհրդային Միության
կենտգործկոմի և ժողկոմխորհի 35 թ. ապրիլի 7-ի վորոշումը
անչափահասների հանցագործությունների դեմ պայքարելու մա-
սին։ Բուրժուական մանկավարժության կարգապահություն դաս-
տիարակելու տեսությունների քննադատությունները։

## ԴԵՊԻ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒ-
## ԹՅՈՒՆԸ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ
## ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼԸ

Լենինը և Ստալինը կոմունիստական աշխատանքի մասին։
Խորհրդային Միության Ստալինյան Սահմանադրությունը սո-
ցիալիստական աշխատանքի մասին (հոդ. 12)։ Սովորողների
աշխատանքի և հանգստի կազմակերպումը դպրոցի և ընտանիքի
կողմից։ Դպրոցի և ընտանիքի աշխատանքի ռեժիմի ճիշտ կազ-
մակերպումը և նրա խիստ պահպանումը յերեխաների և դաստ-
իարակողների կողմից։ Սովորողների աշխատանքների կայուն կար-
գացուցակ դպրոցում և ընտանիքում։ Սովորողների աշխատանքի
ճիշտ կազմակերպումը դասարանում՝ դասի ժամանակ։ Սովորող-
ների աշխատանքի կոլեկտիվ ձևերը դպրոցում և դպրոցից դուրս։
Այդ ձևերի զարգացման անհրաժեշտությունը (Համկ(բ)Կ ԿԿ
32 թ. ոգոստոսի 25-ի վորոշումը)։
Տեսական գիտելիքները աշխատանքում գործադրելու կա-
րողության դաստիարակումը։ Աշխատանքի սոցիալիստական մե-
թոդին տիրապետելու կարողության դաստիարակումը՝ ինքնաքըն-
նադատություն, սոցմրցում աշխատանքներում, հարվածայնու-

թյուն, աշխատանքի ստախանովյան մեթոդներ (գերազանց սովորու-թյունը դպրոցում)։ Տեխնիկայի ճիշտ օգտագործում։ Տեխնիկայի ստեղծագործական տիրապետումը։ Սովորողների՝ դպրոցում և տանը կատարած օրինակելի աշխատանքների ցուցադրում (դպրոցի առաջադրությունների հիման վրա)։ Սովորողների հասարակական աշխատանքների կազմակերպումը։ Ղեկավարությունն ու օգնությունը այդ աշխատանքների կատարման ընթացքում։

Լենինը և Ստալինը սոցիալիստական սեփականության և դեպի նա ունենալիք վերաբերմունքի մասին։ ԽՍՀՄ-ի Ստալինյան Սահմանադրությունը սոցիալիստական սեփականության և դեպի նա ունենալիք վերաբերմունքի մասին։ Սովորողների վերաբերմունքը դեպի սոցիալիստական սեփականությունը։ Սոցիալիստական սեփականության պահպանումը, մասնակցություն դպրոցի կահավորման մեջ։ Խնամքոտ վերաբերմունք դեպի իր իրերը։ Յերեխաների դեպի սոցիալիստական սեփականությունն ունեցած վերաբերմունքի օրինակները։

Սոցիալիստական հումանիզմի և դեպի սոցիալիստական համակեցության կանոնները գիտակցական վերաբերմունքի դաստիարակությունը։

Սոցիալիստական հումանիզմի էությունը։ Մարքսիզմի հիմնադիրները ճշմարտության, ազնվության, կոլեկտիվիզմի, բարեկամության և ընկերության մասին։ Աշակերտության կողմից բոլշևիկյան ճշմարտության և ազնվության պահպանելը աշխատանքում և իրենց փոխհարաբերություններում։

Կոլեկտիվիզմի, մտերմության և ընկերականության դաստիարակությունը։

Աշակերտների ընկերներ ընտրելը։ Հարգանքի դաստիարակությունը դեպի սոցիալիստական համակեցության կանոնները դպրոցում և ընտանիքում։

Պայքար յերեխաների անխնամատարության դեմ։

## 2. Բոլշևիկյան կամքի յեվ բնավորության դաստիարակություն

Լենինը և Ստալինը բոլշևիկյան կամքի և բնավորության մասին։ Կոմունիստական սկզբունքայնություն։ Վստահություն



դեպի իր ուժերը, կենսուրախություն, վճռականություն, կայունություն, համառություն, արիություն, համարձակություն և հերոսություն։

Մարքս-լենինյան աշխարհայեցողության նշանակությունը կամքի և բնավորության դաստիարակման մեջ։ Սովորողների կամքի և բնավորության զարգացումը դպրոցում, ընտանիքում, դասարանական, արտադասարանական և արտադպրոցական պարապմունքներում, խաղերում, սպորտում և այլն։ Աշակերտների մեջ բոլշևիկյան կամքի և բնավորության հանդես գալու օրինակների ցուցադրում։

## 3. Ֆիզիկական դաստիարակություն

Մարքսը և Լենինը ֆիզիկական դաստիարակության մասին։ Ֆիզիկական դաստիարակության տեղը սոցիալիզմի բազմակողմանիորեն զարգացած կառուցողներ պատրաստելու գործում։ ՀամԿ(բ)Կ ԿԿ 32 թ. ապրիլի 21-ի վորոշումը («Պիոներական կազմակերպության աշխատանքների մասին») առողջ փոխարինողներ ունենալու պայքարի մասին։ Աշակերտների լրիվ առողջ օրգանիզմի զարգացման պայմանները։ Դպրոցի աշխատանքների սանիտարական և առողջապահական ռեժիմը։ Առողջապահական ունակությունների դաստիարակությունը։ Ֆիզկուլտուրան խորհրդային դպրոցում։ Արտադպրոցական առողջապահական աշխատանք։ Առողջապահական աշխատանք աշակերտության հետ՝ արձակուրդների ընթացքում։ Առողջապահական դպրոցներ։ Խորհրդային դպրոցի աշակերտության նախապատրաստումը բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության պաշտպանության համար։ Տղաների և աղջիկների համատեղ ուսուցում և դաստիարակություն խորհրդային դպրոցում։ Համատեղ դաստիարակության սկզբունքը խորհրդային դպրոցում։ Տղամարդն ու կինը ընկերներ են կոմունիզմի համար մղվող դասակարգային պայքարում։ Բարոյական և ֆիզիկական դաստիարակության կապը խորհրդային դպրոցում։

## 4. Եսթետիկական դաստիարակություն

Մարքսիզմի հիմնադիրները եսթետիկական դաստիարակության մասին։ Գեղարվեստը վորպես զգացումների, մտքի և կամքի

դաստիարակության միջոց։ Նաթեաիկական դաստիարակությու-
նը մարդու բազմակողմանի զարգացման մեջ։ Նաթեմատիկական
դաստիարակության խնդիրները խորհրդային դպրոցում։
Նաթեմատիկական դաստիարակության խնդիրների լուծման
միջոցները (գրականության, ցուցադրության, երգի, նկարչու-
թյան, ծեփի և այլ առարկաների դասավանդում)։ Արտադպրոցա-
կան միջոցառումներ։

ՅՈԹԵՐՈՐԴ ՄԱՍ

# ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՅԵՎ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

## Աշակերտական կազմակերպությունները

Կոմյերիտական կազմակերպությունը դպրոցում։ Կոմյերի-
տական կազմակերպության խնդիրները դպրոցում Համկ(բ)Կ
ԿԿ ցուցմունքների համաձայն։
Կոմյերիտմիության ծրագրերի պահանջները դպրոցում և
կոմյերիտականների մեջ աշխատելու բնագավառում։ Պիոներական կազ-
մակերպությունը դպրոցում և նրա կառուցվածքը։ Պիոներ
կազմակերպության խնդիրները դպրոցում Համկ(բ)Կ ԿԿ-ի և
կոմյերիտմիության ցուցմունքների հիման վրա։ Կոմյերիտական
և պիոներական կազմակերպությունները դպրոցում և նրանց
աշխատանքի բովանդակությունն ու մեթոդները։
Քաղաքական-դաստիարակչական աշխատանք։ Պայքար ա-
շակերտության բարձր առաջադիմության և գիտակցական դիս-
ցիպլինայի համար։ Առողջապահության, պաշտպանության և
ֆիզիկական կուլտուրայի աշխատանքները։
Աշխատանքի սոցիալիստական մեթոդների պրոպագանդա։
Հանգստի և զվարճանքի կազմակերպում։ Կոմյերիտական կազ-
մակերպիչներն ու պիոներ ջոկատավարները դպրոցում։ Նրանց
աշխատանքի բովանդակությունը և մեթոդները։
2. Աշակերտական կազմակերպությունները խորհրդային
դպրոցում.—տարրական դպրոցում (1—3 և 4-րդ դասարան-
ներ), միջնակարգ դպրոցում (5—7-րդ, 8—10-րդ դասարաննե-
րում)։ Նրանց խնդիրները և աշխատանքի բովանդակությունն
ու մեթոդները։



ՈՒԹԵՐՈՐԴ ՄԱՍ

## Դպրոցն ու ընտանիքը

Խորհրդային ընտանիք։ Ցերեխաների դաստիարակության
խնդիրները խորհրդային ընտանիքում։ Ցերեխաների ռեժիմի
սահմանումն ընտանիքում, հաշվի առնելով նրանց տարիքը-
ախտաեմատիկորեն տարվող հսկողություն։ Աշակերտության ան-
խնամության վերացումը դպրոցի և ընտանիքի կողմից։ Դպր-
ոցի խնդիրները ծնողների մեջ մանկավարժական պրոպա-
գանդա տանելու ուղղությամբ։
Դպրոցի և ընտանիքի կապերի ձևերը։ Ընտանիքի ազդե-
ցությունը ընկերական կոլեկտիվ ընտրելու գործում։ Ցերեխա-
ների դաստիարակությունն ընտանիքում՝ օրինակների միջո-
ցով։ Ընտանիքում սովորողներին օգնելը դպրոցի առաջադ-
րանքները կատարելու գործում։ Ընտանիքի մասնակցությունը
սովորողների արտադպրոցական աշխատանքների, հանգստի և
զվարճանքի կազմակերպման մեջ։

ԻՆՆԵՐՈՐԴ ՄԱՍ

# ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՅԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների
խնդիրները։ Աշակերտության պահանջների և հետաքրքրու-
թյունների խթանումն ու բավարարումը գիտության, տեխնի-
կայի, գեղարվեստի, ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառնե-
րում։ Սովորողների հասարակական-քաղաքական զարգացումն
արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների
պրոցեսում։ Աշակերտության հետ կատարվող արտադասարա-
նական և արտադպրոցական աշխատանքները դպրոցի ուսում-
նական և դաստիարակչական աշխատանքների նպատակներին
ենթարկելը։
Աշակերտության ընթերցանության կազմակերպումը։
Գրականություն երեխաների և պատանիների համար։ Ըստ
դասարանների աշակերտության համար գրականության ցու-
ցակների կազմելը մանկավարժների կողմից։ Աշակերտների ըն-

թերցանության կազմակերպումը կապված դպրոցում ուսումնասիրվող առարկաների հետ։ Մանկական դպրոցական և արտադպրոցական գրադարանների կազմակերպումը և նրանց աշխատանքը։

Աշակերտության խմբակային աշխատանքների կազմակերպումը։ Խմբակների տիպերը։ Խմբակային աշխատանքային ծրագրերը։

Աշակերտության ակտիվությունը և ինքնագործունեությունը խմբակային աշխատանքներում։ Ընթերցանության, ցերեկույթների և յերեկույթների կազմակերպումը դպրոցում և նրանց դաստիարակչական ու կրթական նշանակությունը։

Արտադպրոցական աշխատանքներն աշակերտության հետ։ Մանկական տեխնիկական կայաններ, կաբինետներ և լաբորատորիաներ։ Տեխնիկական հետաքրքրությունների պահանջների բազմազանությունը տարբեր տարիքի յերեխաների մոտ։ Աշակերտների տեխնիկային տիրապետելու գծով տարվող արտադպրոցական աշխատանքների կապը դպրոցական առարկաների ուսումնասիրության հետ (մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, բնագիտություն, աշխարհագրություն և այլն)։ Աշակերտների կառուցողական և գյուտարարական աշխատանքները։

Կինո աշխատանքն աշակերտության հետ։ Դպրոցական և արտադպրոցական կինոյի կազմակերպումը։ Կինո-նկարների ընտրությունը դպրոցի դաստիարակչական և կրթական խնդիրների տեսակետից։ Կինո-սեանսների տևողությունը։ Աշխատանք աշակերտների հետ՝ կինո-նկարը դիտելուց հետո։

Թատրոնի աշխատանք յերեխաների հետ։ Մանկական թատրոնների կազմակերպումը և յերեխաների համար պիեսներ բեմադրելը հասակավորների թատրոնում։ Յերեխաների համար պիեսների ընտրությունը՝ դաստիարակչական և կրթական խնդիրների տեսանկյունով։ Աշխատանք աշակերտների հետ պիեսը դիտելուց առաջ։

Աշակերտների ամփոփող աշխատանքը պիեսը դիտելուց հետո։ Դպրոցական թատերական բեմադրությունների կազմակերպումն աշակերտության մասնակցությամբ։ Աշխատանք աշակերտության հետ պիոներական տներում։

Պիոներական տների խնդիրները։ Նրանց աշխատանքի բովանդակությունն ու մեթոդները։



Առողջապահական աշխատանքն աշակերտության հետ։ Ձմեռային շրջանի դահուկների և չմուշկների կայանների կազմակերպումը։ Մանկական հանգստյան տների և սանատորիաների աշխատանքը։ Ամառային շրջանում պիոներական ճամբարների կազմակերպումը, ճամբարում յերեխաների հետ կազմակերպվելիք աշխատանքի բովանդակությունն ու մեթոդները։ Առողջապահական հրապարակները, նրանց աշխատանքի կազմակերպությունը, բովանդակությունն ու մեթոդները։ Աշակերտների հեռավոր էքսկուրսիաների և արշավների կազմակերպումը։

Հանգստի և կուլտուրայի մանկական պարկ։ Մանկական սանատորիաներ և հանգստի տներ։

ՏԱՍԵՐՈՐԴ ՄԱՍ

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Լենինը, Ստալինը և կուսակցական վորոշումները խորհրդային դպրոցի ուսուցչի մասին։ «Ժողովրդական ուսուցիչների փաղանգը կազմում է սոցիալիզմի հիման վրա նոր կյանք կառուցող մեր յերկրի աշխատավորների մեծ բանակի ամենաանհրաժեշտ մասերից մեկը» (Ստալին)։

ՀամԿ(բ)Կ ԿԿ, Խորհրդային Կառավարության և խորհրդային հասարակայնության հոգատարությունն ուսուցչի մասին։ Խորհրդային ուսուցիչը ԽՍՀՄ-ի անվանի քաղաքացին է։ Ուսուցչի գլխավոր դերը դպրոցում։ Ուսուցչի պատասխանատու և պատվավոր պարտականությունը ԽՍՀՄ-ում։

Խորհրդային ուսուցչի հատկությունները, վորոնք անհրաժեշտ են կոմունիստական դաստիարակության, կրթության և ուսուցման խնդիրներ լուծելու համար։ Մարքս-լենինյան կրթություն, բոլշևիզմի տիրապետում։ Բոլշևիկի հատկությունների դաստիարակություն. դասավանդվող առարկայի խոր իմացություն. մանկավարժական պատրաստություն։ Ստալինյան հումանիզմը վորպես հիմք ուսուցչի դեպի յերեխաներն ունեցած հարաբերությունների մեջ։ ԽՍՀՄ-ի մանկավարժական գործի ականավոր վարպետների բնութագիրը։ Ուսուցիչների պատրաստման սիստեմը ԽՍՀՄ-ում։ Խորհրդային դպրոցի ուսուցիչների կրթության բարձրացման և կատարելագործման հիմնարկները։

Դպրոցի աշխատանքի ղեկավարությունը։ Ուսուցիչների ճնշված վիճակը բուրժուական հասարակակարգում։

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՄԱՍ

# ԴՊՐՈՑԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

1. Դպրոցի ղեկավարությունը։
2. Դպրոցական շենքը և նրա կահավորումը։

Դպրոցի ղեկավարությունը։ Դպրոցական կանոնադրությունը, որպես դպրոցի կյանքը և աշխատանքները ղեկավարող փաստաթուղթ։ Դպրոցի կառավարումը։ Դպրոցի դիրեկտորը, նրա իրավունքներն ու պարտականությունները։ Դպրոցի միանձնյա ղեկավարությունը։ Դիրեկտորի օգնական՝ ուսումնական մասի վարիչ։ Ուսումնական մասի վարիչի իրավունքներն ու պարտականությունները։ Ուսուցիչների, դասղեկների, կոմյերիտ կազմակերպչի, պիոներ ջոկատավարի իրավունքներն ու պարտականությունները։

Դպրոցական բժիշկը, նրա իրավունքներն ու պարտականությունները դպրոցում։

Մանկավարժական խորհուրդը և նրա աշխատանքի բովանդակությունը։ Դպրոցի մեթոդական կազմակերպությունները։ Դպրոցի աշխատանքների պլանավորումը։ Սիստեմատիկ հսկողության կազմակերպումը դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների ընթացքի վրա։

Ժողկրթբաժինների և Լուսժողկոմատի կողմից դպրոցներին մանկավարժական օգնություն ցույց տալու գործի կազմակերպում. Դպրոցների տեսչական հրահանգումը։ Տեսչին առաջադրվող պահանջները։

Դպրոցական հաշվետվություն։ Դասարանական մատյան, աշակերտական օրագիր և նրանց կիրառման կարգը։ Ուսուցիչների և դասղեկների հաշվետվությունը։ Դպրոցական աշխատանքների ընդհանուր հաշվեհարդար ուսումնական տարվա քառորդներով։



Դպրոցական բյուջեն, դպրոցի տնտեսությունը և գործավարությունը։

Դպրոցի տարեկան հաշվետվությունը։ Դպրոցի ծնողական կոմիտեն, նրա իրավունքներն ու պարտականությունները։ Դպրոցի հաշվետվությունը հասարակայնության առաջ։

Դպրոցական շենքը և նրա կահավորումը։ Դպրոցական շենքի և նրա տեղադրության առաջադրվող մանկավարժական և առողջապահական-սանիտարական պահանջները։ Դպրոցական դասարաններին և այլ սենյակներին առաջադրվող պահանջները։

Դպրոցի կահավորումը կահույքով։ Աշակերտական դրասեղաններ, գրատախտակներ, ուսուցչի սեղան, պահարաններ։ Ուսումնական կաբինետների սարքավորումներ, լաբորատորիաների, ֆիզկուլտուրայի դահլիճի, անկյունների սարքավորումը։ Դպրոցի ներքին ձևավորումը։ Կենդանի անկյուն դպրոցում։ Դպրոցական օդերևութաբանական կայան։ Դպրոցամերձ հողամաս։

Հատուկ դպրոցական կաբինետներ՝ ֆիզիկական, քիմիական, բիոլոգիական և այլն։ Աշակերտների աշխատանքների դպրոցական ցուցահանդեսներ, թանգարաններ։ Մեթոդական դպրոցական կաբինետներ ուսուցիչների համար։ Դպրոցական գրադարաններ։ Աշակերտների աշխատանքների կազմակերպումն ու մեթոդիկան այդ դպրոցական գրադարաններում։

## Համառոտ դիտողություններ մանկավարժության ծրագրի նախագծի առթիվ

Ծրագրի նախագիծն առանձին հատված է հատկացնում «Կոմունիստական դաստիարակության նպատակը» թեմային, որը խորհրդային մանկավարժության դասընթացի հետագա կառուցման փորձիչն է հանդիսանում։ Այս թեմայում մանրամասնորեն և ծավալուն կերպով լուսաբանվում է մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների հայացքները նոր մարդ—կոմունիստ դաստիարակելու մասին. տրվում է Ստալինյան դարաշրջանի նոր մարդու բնութագիրը և մարքսիստական-լենինյան ուսմունքը մարդ-անհատի զարգացման մասին։

ՀՀ Ազգային գրադարան
NL0216076

45.548

Նախորդի հետ սերտորեն կապված հաջորդ թեման «Խոր-հրդային յերեխաներ» թեման է: Մանուկն իր գոյության առաջին օրից սկսած, նախադպրոցական և հետագայում դպրոցական պետք է մանրամասն ուսումնասիրվի մանկավարժների կողմից:

«Խորհրդային յերեխաներ» թեմային նախորդում է, անմիջականորեն հաջորդում է «ԽՍՀՄ-ի պետական քաղաքականությունը ժողովրդական լուսավորության բնագավառում և դպրոցը» թեման: Այս թեմայի մեջ շարադրված են Լենինի, Ստալինի ցուցմունքներն ու կուսակցական վորոշումները դըպրոցի մասին, ՀամԿ(բ)Կ ծրագրի պահանջները ժողովրդական կրթության բնագավառում և խորհրդային դպրոցի կառուցման հիմնական սկզբունքները. այս թեմայով ուսանողն սկսում է ուսումնասիրել դպրոցում տարվող կրթության, ուսուցման և դաստիարակության տեսությունները:

Ուսուցումն ու դաստիարակությունը միասնական բազմակողմանի մանկավարժական պրոցես է: Այսուհանդերձ այս պրոցեսը մանրազնին և բազմակողմանիորեն ուսումնասիրելու համար նախագիծն այս պրոցեսի տարբեր կողմերը՝ ուսուցումն ու դաստիարակությունը մշակում է առանձին գլուխներում:

Ծրագրի նախագծում զգալիորեն ծավալված է «Դաստիարակության տեսություն» թեման: Այս թեմայի մանրամասն զարգացումը թելադրվում է նրա մեջ մի շարք նոր մոմենտներ մտցնելու անհրաժեշտությամբ:

«Խորհրդային ուսուցիչ» թեման տրվում է 10-րդ գլխում, յերբ ուսանողներն արդեն յուրացրել են խորհրդային մանկավարժության կողմից ուսուցչին առաջադրված հիմնական պահանջները:

Դպրոցական առողջապահական հարցերը մանկավարժության ծրագրի մեջ մտցված չեն, նկատի ունենալով այն, վոր դպրոցական առողջապահությունը մանկավարժական բուհերում դասավանդվում է վորպես ինքնուրույն առարկա: